

ժիցկու դասախօսութիւնից յետոյ—Իրաւունքի զարգացման օրէնքները և կնոջ իրաւական դրութիւնը—ամբիօն է բարձրանում Ա. Ի. Տիրիօլիան, որը իր ճառի մէջ միանգամայն սրամիտութեամբ անդին կերպով քարեր նետեց երրորդ Գումայի հասցէին իր դեկուցիման մէջ:

Աերջում շնորհաւորում է Պետերբուրգի բանասրահներին ներկայացուցիչը:

Գրանով էլ վերջացաւ ռուսական կանանց առաջին ընդհանուր ասնի հանդիսաւոր օրը, որից յետոյ սկսուեալ են համագումարի սեկցիաների աշխատանքները:

Եւ այց որքան կրկնութիւններ, որքան բուռն և անվերջ ծափահարութիւններ, որքան վաճառու աշխատանք, եւ անդ: Եւ այդ բոլորը՝ ապացուցանելու համար, որ կինն էլ մարդ է, պէտք է լինի իրաւահաւասար, որ մարդկութեան կէս մասի համար ստեղծուած է մի հարց, որը ոչ լօգիկայի, ոչ էտրիայի, ոչ գիտութեան և ոչ էլ առողջ մտքի տեսակէտից ոչ մի հարց չէ կազմում, այնքան պարզ է նա և կասկածից դուրս Սահայն անարդարութիւնը մնում է կեանքի մէջ իբրև բիրտ միաստ:

Կանայք այժմ իրանք են գալիս վերցնելու իրանց պատկանող իրաւունքները: Նրանք, ի հարկէ, կը վերցնեն դա ժամանակի խնդիր է միայն, եթէ ոչ այսօր, վաղը, միւս օրը:

Տղամարդկանց խելացի, առողջամիտ մասը պէտք է օգնէ նրանց:

«Մշ.»

## Հայաստան եւ պապը

Պիոս Ժ. պապը անցեալ շաբթու մասնաւոր ունկնդրութիւն շնորհեց Պոլիսէն և Իզմիրէն Հում գացած հայ-հռոմէականներուն, որոնք իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին պապին յրեւելեանին առթիւ: Արփիարեան գերապայծառ, որ նախորդ Բէթիմին առեն Լիբանանին մէկ վաճառք աքսորուած էր, իր ընկերակիցներով առաջնորդուեցաւ պապին մօտ, որ հետեւեալ ճառը արտասանեց. «Հայաստան այն ազրիւրն է. ուրիշ ըզխած են բոլոր ժողովուրդները: Հայ ազգը ու շիմ, կիրթ ու աշխատասէր ժողովուրդ մըն է: Հայ լեզուն ներդաշնակ ու հրապուրիչ է: Հայ կրօնքին արարողութիւնները ազնիւ է, յուզիչ ու գրաւիչ: Նաա կը սիրեմ հայ ազգը, հայ լեզուն և հայ կրօնը: Նարունակ կաղօթեմ հայ ազգին երջանկութեան ու բարգաւաճման համար:» («Ժամ.»)